ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 289-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Հրաման	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2024.09.16-2024.09.29 Պաշտոնական հրապարակման օրը 27.09.2024	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Առողջապահության նախարար	*Ընդունման ամսաթիվը*	23.09.2024
Ստորագրող մարմինը	Առողջապահության նախարար	*Ստորագրման ամսաթիվը*	23.09.2024
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	07.10.2024	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 44-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

«23» սեպտեմբեր 2024 թ. N 289-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 44-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 18-ի «Հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության ընդունարանում պացիենտի բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ընթացակարգը և ընդունարանում վարվող բժշկական փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» N 44-Ն հրամանի հավելված 1-ի 16-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«16. Ընդունարանի ընդհանուր բաժնի առաջնային հատվածում Ընդունարանի բուժանձնակազմը ջերմաչափում է բժշկական կազմակերպություն դիմած (բերված) բոլոր պացիենտներին, հավաքում է համաճարակաբանական վերհուշ՝ ճշտելով վարակիչ հիվանդություններով անձանց հետ շփման փաստը և դրա ժամկետները, զննությամբ պարզում է պացիենտների մոտ վարակիչ հիվանդությանը բնորոշ կլինիկական ախտանշանների առկայությունը (հազ, կատարալ երևույթներ, կոնյուկտիվիտ, քթահոսություն, ցան, մկանացավ, փորլուծություն, գլխացավ և այլ ախտանշաններ), որից հետո, վարակիչ հիվանդության կասկածի դեպքում, բուժանձնակազմի կողմից անհրաժեշտ է՝»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա. Ավանեսյան

23.09.2024

Պաշտոնական հրապարակման օրը՝ 27 սեպտեմբերի 2024 թվական: